

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 24/5

23 հունիսի 2015 թ.

Քննարկվեց «Արտեգա» ՍՊԸ 29.05.2015 թ-ի դիմում-գանգատը 20.01.2015 թ-ին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկով ընկերության վրա դրված պարտականությունները կատարված համարելու և պատասխանատվության միջոցներ չկիրառելու վերաբերյալ:

«Արտեգա» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

«Արտեգա» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) կողմից 2014 թ-ի IV եռամսյակի ԱԱՀ հաշվարկը ներկայացվել է 20.01.2015 թ-ին, որտեղ սխալմամբ որպես հաշվետու ժամանակաշրջան «IV եռամսյակ»-ի փոխարեն նշվել է «12-րդ ամիս»-ը: Այնուհետև, ընկերության կողմից հայտնաբերվել է կատարված տեխնիկական սխալը և նույն հաշվետվությունն ուղարկվել է 27.03.2015 թ-ին՝ հաշվետու ժամանակաշրջանը նշելով «IV եռամսյակ»-ը:

Ընկերությունը հարկ է համարում նշել, որ երկու հաշվարկներն էլ ներառում են 2014 թ-ի IV եռամսյակի նույն տվյալները:

20.01.2015 թ-ին ներկայացված հաշվարկը հարկային մարմնի կողմից համարվել է չհանձնված և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածին համապատասխան՝ մինչև 27.03.2015 թ. հաշվարկվել է տուգանք բյուջե վճարման ենթակա հաշվարկված ԱԱՀ-ի գումարի (4.429.560 դրամ) նկատմամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 20.01.2015 թ-ին և 27.03.2015 թ-ին ներկայացված հաշվարկներում տվյալները եղել են նույնը (բյուջեի հանդեպ պարտավորությունների փոփոխություն տեղի չի ունեցել), հաշվետու ժամանակաշրջանի նշագրումը թյուրիմացության և տեխնիկական սխալի արդյունք է (թույլ տրված խախտումը կրում է ձևական բնույթ), առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով, ընկերությունը խնդրում է 20.01.2015 թ-ին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկով ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով համարել կատարված, այն համարել ընդունված և չկիրառել տուգանքներ:

ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Արտեգա» ՍՊԸ կողմից 20.01.2015 թ-ին ներկայացվել է 2014 թ-ի IV եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկը, որում, սակայն, հաշվետու ժամանակաշրջանը մասում «2014 թ-ի IV եռամսյակ» նշելու փոխարեն սխալմամբ նշվել է «2014 թ-ի 12-րդ ամիս»: Այնուհետև, ընկերության կողմից հայտնաբերվել է կատարված տեխնիկական սխալը և նույն հաշվետու ժամանակաշրջանի համար 27.03.2015 թ-ին ներկայացրել է ԱԱՀ-ի նոր հաշվարկ՝ հաշվետու ժամանակաշրջանը նշելով «2014 թ-ի IV եռամսյակ»: Ընդ որում հարկ է նշել, որ վերոգրյալ ԱԱՀ-ի երկու հաշվարկներում ներառված տվյալները նույնական են:

Ընկերության կողմից 20.01.2015 թ-ին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկը ՀՀ ՖՆ Գորիսի ՏՀՏ կողմից համարվել է չհանձնված, որի հետևանքով հաշվարկում արտացոլված բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարի նկատմամբ՝ գումարով 4.429.560 դրամ, կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ավելացված արժեքի հարկի հաշվարկում հաշվետու ժամանակաշրջանը սխալ է նշվել թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է, այսինքն՝ թույլ տրված խախտումը կրում է ձևական բնույթ, քանի որ ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով, ըստ էության, կատարված են:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Արտեգա» ՍՊԸ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Ղ Ո Մ Է՝

«Արտեգա» ՍՊԸ 29.05.2015 թ-ի դիմում-գանգատը բավարարել:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝

